

5163

Պրոբատարներ բոլոր  
յերկբաների միացնիք

# ԱՅՍԱԼԻՆՆ ՈՐ ՀԱՇԻՄԸ

ВНИИСТРА  
ИНСИТУТА  
ДОСТОЯТЕЛЬСТВА  
Академии наук  
СССР

(1901—1902 թ. թ.)

Ա. Ն. Գ. Ե. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.  
Ընդհատակյա աշխատանքից

Ն. ԼԱԿՈՐՍՅՈՒ  
Առաջադրանով

Արխագիայի Կուսերատարակչութիւն,  
Սուխում—1934

3K019.  
U-85

ՄՏԱԼԻՆՆ  
ՈՒ  
ՀԱՇԻՄԸ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОССТАНОВЛЕНИЯ  
Академии Наук  
СССР

35-Կ  
Նա 1132  
3K019  
4-85

10 AUG 2005  
14 NOV 2009

Պրոֆեսորներ բոլոր  
յերկրների միացի՛ք

**ՍՏԱԼԻՆՆ  
//  
ՀԱՇԻՄԸ**

(1901—1902 թ. թ.)

Անցքեր Բաթումի  
ընդհատակյա աշխատանքից

**Ն. ԼԱԿՈՒՅԻ**  
Առաջաբանով

Արխիվիայի Կուսերատարակչու թյուն,  
Սուխում—1934

18 SEP 2013

5763

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՆԱԿԱԼ


(1901-1902 թթ.)



60275-67



Ի. Վ. Ստալին (Ընկ. Ստալ) 1901 թվին



Հաշիմ Սմբրեա



## Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Բաթումի շրջանում ապրող ինձ ծանոթ աշխատավոր գյուղացի-արխաղները շատ անգամ ինձ դիմել են թախանձագին խնդրանքով, վոր գրեմ ու հրատարակեմ վորևէ մի բան, ինչ վոր իրանց հայտնի է 1901-1902 թ. թ. Բաթումի անցքերից ընկ. Ստալինի մասին:

Յեթե յես վորոշեցի բավարարել նրանց խնդրանքը, իհարկե՝ վոչ թե նրա համար, վոր ներկա գրքույկը հավակներ վորևէ հավիով մի վորևէ ընդհանրացում տալու Ստալինի մասին իրրև բոլշևիզմի քաղաքագետի, ռազմագետի, թեորև-տիկի և պրակտիկի, մի ամբողջ դարաշրջանի մեծ մարդու, վորպիսին պատմությունը 100-200 տարին մի անգամ և տալիս մարդկության:

Այս գրքույկում առաջ են բերված Բաթումի ընդհատակյա կյանքում Ստալինի աշխատանքի վերաբերյալ միայն մի քանի դրվագները:

Ներկա ուրվագիծը մենք հրատարակում ենք նրա համար, վոր նա ընտրող է, խորապես ըմբռնելու աճման և բարձրացման պայմանները աշխարհի հսկաների, ինչպիսին են Լենինն ու Ստալինը:

Մեր հեղափոխության պատմության և մեծն Ստալինի կյանքի մեջ (իսկ այս յերկու հասկա-

ցողությունները սերտ կապով հյուսված են մի-միանց հետ), Բաթումի 1901-1902 թ. թ. անցքերը միայն դրվագներից մեկն է, մեկ եջն՝ այն մեծ պատմության և մեծ կենսագրության: Ավելի փոքր տեղ են բռնում նրանց մեջ այն անցքերը, վորոնք տեղի յեն ունեցել արևադ գյուղացու Հաշիմ Սմբրայի խրճիթում: Բայց առաջնորդների մասին գոյություն ունեցող բուրժուական և կեղծ սոցիալիստական տեսություններին հակադիր՝ մենք մարքսիստ-բոլշևիկներս առաջնորդի աճումը միշտ կապել ենք նրա դասակարգի աճման հետ: Ստալինի կյանքը, ինչպես և Լենինի կյանքը, ամենասերտ կերպով կապված է բանվորա-գյուղացիական միլիոնավոր մասսաների կյանքի հետ, վորոնց առաջնորդներն են հանդիսանում նրանք: Ահա ինչու համար Ստալինի կենսագրության մասնիկները մենք փնտրում ենք Չաոբայի ծուռ ու մուռ փողոցներում, մանթաշենքերի, նորեկների, ռոտշիլդների գործարանների ցեխերում, Հաշիմ Սմբրայի նման գյուղացիների խրճիթներում:

Հաշիմի խրճիթիկը Ստալինի կյանքի պատահական կիսակայանը չէ, ինչպես և պատահական չէ 1917 թ. Պիտերի բանվորներից պաշտպանված Լենինի հյուղը:

Ստալինը հենց նրանով է ուժեղ, վոր նա մասսայի մոտ յեկավ վոչ կողմնակի կերպով, հաղթությունից հետո, այլ դեռ ևս բանվորական շարժման արշալույսին, և հետո ել ռեակցիայի ամենա մոռյալ տարիներին, նա մասսայի հետ եր, ապրում և գործում եր աշխատավոր մասսայի խորքերում:

Հենց դրա համար ել Ստալինը, ինչպես և Լենինը, ըմբռնում եր մասսայի կարիքները վոչ տեսականորեն, այլ և ամբողջ հոգով ու սրտով: Յևլ հենց դրա համար ել մեր Ստալինը, ինչպես և Լենինը, անսահման սիրված է աշխատավոր ժողովրդից:

Ստալինի մեծությունն և ուժը, ինչպես և Լենինի, կայանում է նրանում, վոր բարձրանալով ընդհատակյա կյանքից, Հաշիմ Սմբրայի խրճիթից, դառնալով համաշխարհային հեղափոխության մեծ առաջնորդը, նա կարողացավ մնալ այնպես մատչելի և հասկանալի աշխատավոր մարդու համար, ինչպիսին եր այն ժամանակ՝ ընդհատակյա կյանքի ծանր ու դժվար տարիներին:

Հիշում եմ ինչպես մի անգամ մի արևադ գյուղացի Ստալինի Ուխարա գյուղն այցելած ժամանակ, բարեմաղթություններ անելուց հետո Ստալինին, ասաց հետևյալը:

— Իմ կյանքում յես շատ իշխանավորներ և ամեն տեսակի մեծ մարդիկ եմ տեսել, բայց նրանցից և վոչ մեկին, չեմ դիմել բարի խոսքերով, իսկ քեզ, թանկագին, ցանկանում եմ յերկար-յերկար ապրել:

Ամբողջ աշխարհն է խոստովանում քո մեծությունը բոլոր պետություններն ել հաշիվ յեն առնում և՛ խոստովանում, վոր դու մեծ մարդ յես: Այդ բոլորին հայտնի է: Ինձ չի զարմացնում, վոր ամբողջ աշխարհը խոստովանում է քո մեծությունը, զարմանալին այն է, վոր յես՝ ամենափոքր և անցյալում ամենա հետ ընկած մարդս ել խոստովանում եմ այդ: Յես ուզում եմ ասել քեզ

այնպիսի բան, վոր ամեն մարդ չգիտե: Դու աֆըր-  
լապա \*) յեա—խակական տղամարդ:

Մի ուրիշ գյուղացի—Խորհրդների համաժողով-  
թենակոն համագումարի պատգամավոր— համա-  
գումարի վերջին նիստում, ձեռքի մի լայն շար-  
ժումով հարցրեց ինձ:

— Ու՞ր ե նա: Ինչ՞ու նա չի յերևում: Ինձ  
հարկավոր չե այնպիսի մի ուրուր, վոր սովորու-  
թյուն ունի նեղացած ու փքված նստելու ցան-  
կապառի վրա, թռչնիկներն իսկ հարձակվում են  
վրան անաղ են տալիս նրան, իսկ ինքը, այդ  
նույն ուրուրը չհեռանալով ցանկապատից, յերբեմն  
մեկ, յերբեմն մյուս թաթն ե թափահարում, բայց  
վոչ մեկին ել չի կարողանում վորսալ: Ինձ հար-  
կավոր ե լեռնային արծիվ, վորը միշտ ել, ում  
հարկավոր ե, կը բռնի . . . .

Յերբ յես Ստալինի անունը տվեցի, գյուղա-  
ցին, բավարարված, արտասանեց:

— Հենց ինքն:

Բայց Ստալինը չկար համագումարի այդ  
նիստում, նա կարծեմ կառավարության զեկուց-  
ման վերաբերմամբ վորոշումներ եր կազմում:

Հաշիմի խրճիթը պատահամար չեք վոր գլխով-  
եց Ստալինի հեղափոխական ճանապարհին: Գոր-

\*) Աֆըրլապա— արխաղի բացատրությամբ, նը-  
շանակում ե հերոսների հերոս, վորոտից ու կայ-  
ծակից ծնված,—վոչ հասարակ տղամարդ, այլ  
այնպիսի մարդ, վո ը ունի մեծ խելք խորաման-  
կություն, ճարպիկություն, ճկունություն ե մեծ  
բարե սիրտ:

ծըն, իհարկե, մի Հաշիմում չե, գործը նրանումն  
ե, վոր Հաշիմի որինակում մենք տեսնում ենք,  
թե ինչպես բոլշևիկներն նորածիլ, աճող բանվո-  
րական շարժումը կարողացան կապել գյուղացու-  
թյան հեղափոխական ձգտումների հետ, կարողա-  
ցան կապել բանվորական շարժումը ազգային  
հեղափոխութան հետ:

Բաթումի բանվորները կազմակերպել ու  
զեկավար բոլշևիկ Սոսո Զուզաշվիլին, համաշխար-  
հային հեղափոխության ապագա առաջնորդը,  
կարողացավ գտնել ուղիներ դեպի նույն-  
իսկ վոչ լիովին գիտակից գյուղացի Հաշիմի հո-  
գին, կարողացավ կապել 1902 թվի Բաթումի  
գործադուլավոր բանվորներին Հաշիմներին հետ:

Յեւ այդպես, քայլ առ քայլ, միջազգային  
միացյալ բանվորական շարժումը, բոլշևիկներին  
զեկավարության տակ իր կողմը գրավեց, ինչպես  
ուռն՝ նույնպես ել ծայրագավառները միլիոնավոր  
ճնշված ազգերի գյուղացիներին:

Իսկապես գործնականում՝ պրոլետարական  
հեղափոխության լենինյան միացումը գյուղացա-  
կան հեղափոխական շարժման հետ հասցրեց մեզ  
մեծ Հոկտեմբերի հաղթանակին ե այն հաղթու-  
թյուններին, վոր այսօր ունենք մենք:

Ստալինը լենինի առաջին ե միակ զինա-  
կիցն եր լենինյան ազգային քաղաքականության  
կոփման ե ճշգրիտ կիրառման գործում:

Գուգառուղի ուսյոնի (Արխաղիա) մի աշխա-  
տավոր գյուղացի մի ժողովում՝ խոսելով խորհր-  
դային իշխանության մասին, հետևյալ պատկերա-  
վոր միտքն արտահայտեց.

— Մենք մի բուռն արխաղներս, վոր ցարական իշխանությունից բնաջնջման եյինք դատապարտված, յեթե պահպանեցինք մեր գոյությունը մեծ հեղաշրջման (Հոկտեմբերյան) ժամանակ և ազատ տնտեսության ու կուլտուրայի զարգացման իրավունք ստացանք, այդ յիշով միայն շնորհիվ մեր Ստալինին: Յերեակայեցեք անագին մի փիղ (Հոկտեմբերյան հեղափոխություն) հաղթական քայլում և և իր ճանապարհին զաշտում տեսնում ե անպաշտպան յերեխաներին հանկարծանաս փոթորից բռնված: Ցանկանալով նրանց պաշտպանել՝ այդ փիղը փռվում ե յերեխաների վրա: Իհարկե՝ փիղն ինչ ազնիվ զգացմունքներով ել համակված լինեք, յերեխաներից վոչինչ չեք մնա, յեթե չգտնվեք այն Ստալինը, վորը իրա ժամանակին ուղղեց փղի վոտները:

Այս գյուղացին զգում եր Ստալինի դերը Լենինյան ազգային քաղաքականության կոլման գործում, թեկուզ հազիվ թե տեղեկություն ունենար այն բանի մասին, վոր խորհրդային իշխանության առաջին որենսդրական ակտերից մեկը, Ստալինի անմիջական մասնակցությամբ գրված, այն կեան եր վորը հայտարարում եր «Ռուսաստանի սահմաններում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգազրական խմբակների ազատ զարգացումը:

Ստալինը յերկար տարինեք աշխատել և Անդրկովկասում: Անդրկովկասի, բանվորներն ու գյուղացիներն առանձնապես սրտագին և ջերմագին սիրում են նրան և պարծենում, վոր ցարական իշխանության դեմ մղած պայքարում Ստա-

լինը անմիջականորեն ղեկավարել և նրանց, և պատահական չե իմ բաթումեցի ծանոթ արխաղների թախանձագին խնդրանքը, վորով ցանկանում են վորպեսզի գրվի և հրատարակվի հեռու անցյալի հիշողությունները Ստալինի մասին:

Բայց Անդրկովկասի աշխատավորության դեպի Ստալինը տածած սերը միայն ազգային պարծանքի արդյունք չե: Այդ սերը՝ նույն անհուն սերն ե, վոր Անդրկովկասի աշխատավորությունը տածում ե դեպի Լենինը, այդ նույն անհուն սերը՝ վոր համայն աշխարհի հեղափոխական աշխատավորությունը տածում ե դեպի Լենինը և Ստալինը իբրեւ հեղափոխական մարդկության առաջնորդներին:

Ստալինը և նրա կուսակցությունը ուժեղ են միլիոնավոր Հաշիմների և Իվանների ողնությամբ, իսկ Հաշիմներն ու Իվաններն անհաղթ են նրա համար, վոր նրանց գլխավորում ե մի պողպատե, անխորտակելի և հանճարեղ առաջնորդ՝ մեր հարազատ և սիրելի Ստալինը:

Ն. Լ. Ա. Կ Ռ Բ Ա.

Բաթումի ծայրամասերում սփռվել էյին ֆաբրիկաներ, գործարաններ և բանվորական բնակավայրեր: Նրանց սերտորեն կապված էյին աշարացիների և աբխազների գյուղերը: Մեր նկարագրած ժամանակաշրջանում, Բաթումի ամենամեծ գործարանը Ռոստիլցի «Բենիտո» գործարանն էր, նրանում աշխատում էյին մինչև վեց հազար բանվորներ: Ուստա-տրյանցիների գործարանում աշխատում էյին հազար յերկու հարյուր հոգի, Մանթաշևի յերկու գործարանները միացնում էյին չորսհազար, և ուրիշ մի կարգ մանր գործարաններ— մինչև յերկու հազար բանվորներ: Բացի դրանցից՝ ծովափնյա աշխատանքներում զբաղված էյին մինչև յերեք հազար բանվորներ: Բանվորության ճնշող մեծամասնությունը, բացի տեղական բնակիչներից— աշարացիներից, կազմում էյին Գուրիայից, Մինգրելիայից, Իմերեթիայից և Աբխազիայից գուրս յեկած գյուղացիները: Կային նաև շատ ուսաններ, հայեր և ուրիշներ: Դրանք չբավորներ էյին, վորոնք գնում էյին զեսլի ֆաբրիկաներն ու գործարաններն իրանց

ծանր տնտեսական դրությունը մեղմացնելու հույսով:

Բանվորները սովորաբար բնակվում էյին Բարցխանայի և Գորոդոկիի \*) շրջանում: Բայց վորովհետև բանվորների թիվը շարունակ աճում էր, իսկ բանվորական թաղամասերի տարածությունը ավելի և ավելի նեղանում, քաղաքի «հայրերը» սկսեցին լուրջ մտածել այն հարցի մասին՝ թե քաղաքի սահմաններից դուրս վոր մասում արդյոք կարելի էր բնակեցնել բանվորներին իրանց ընտանիքներով:

Բարցխանայից և Գորոդոկից հեռու՝ քաղաքի հակառակ ծայրամասում, գտնվում էր ահագին ճահճային մի հողամաս, վորը կրում էր իրան արժանի մի անուն— «Չաորա» \*\*): Այդ թուղ ներվի ասել, «հողերը» ծախու հանվեցին սաժենը մի կոպեկով: Միանգամայն հասկանալի յե, վոր այդպիսի «եժանությունը» աղքատությունից հյուծված բանվորներին ստիպեց ամուր կաշել քաղաքի «հոգատար» չինոյիկներին յերկաբացրած շյուղից ճահիճներում սկսեցին տը

\*) Բաթումի արվարձաններ

\*\*) Վրացերեն.— ճահիճ:

60245-67



ներ բուսնել «հավի վոտների» վրա, հետզհետե կազմելով բանվորական մի մեծ թաղամաս:

Այդ յերեք բանվորական թաղամասերին, — Գորոզոկի, Բարցխանայի և Չառբայի, — բոլորովին մոտ են գտնվում Մահմուդիա, Ֆերիա, Ֆեզիա, Սալիբահուրի, Ասկիսա և Կախաբերի գյուղերը: Այս գյուղերի բնակիչներին մի մասը մի կողմից՝ յերկրագործական շրջանառության համար ազատ հողերի բացակայության՝ իսկ մյուս կողմից՝ աղքատության պատճառով ստիպված էին ֆարերիկաները, գործարանները և ծովամիսյա աշխատանքներին գնալ: Այդպիսով բանվորների և գյուղացիների սերտ կապն ու համախմբակցությունը հիմնված էր վոչ միայն նրանց մոտիկություն, սահմանակցություն, այլ և տնտեսական պայմանների համարյա նույնության վրա:

Յեվ յերբ այդ բաղադրուկ պրոլետարական մասսայում գցվեց առաջին հեղափոխական սերմը, նա արագ աճեց: Բանվորական թաղամասերից պարզ և խիստ կերպով սկսեց հնչել իրավագուրկ և քաղցած պրոլետարի ձայնը, իսկ նրա հետևից բարձրացրեց իր ձայնը և գյուղացիությունը:

Յեվ իշխանությունները վորքան յեռանդազին ճգնում էին խլացնել հեղափոխական արտունջը, այնքան ուժեղանում էր բանվորների և գյուղացիների դասակարգային ինքնագիտակցությունը:

Հետզհետե այդ խմորումը սկսեց վորոշ ձևեր ընդունել: 1897 թվին Բարցխանայում կազմակերպվեց առաջին անկեղալ Սոցիալ-Դեմոկրատական խմբակը, իսկ մի քանի տարուց հետո՝ Բարցխանայի նման խմբակների հետ միասին Կախաբերի գյուղում աճում — զարգանում և գյուղացիական հեղափոխական խմբակը, կապվելով Սիդերիզիսի, Մանթաշեի և Սաչատրյանցի գործարանների հեղափոխական բանվորների հետ:

Բարցխանյան խմբակի փոքրաթվությունը 1897-1901 թ. թ. շրջանում թույլ չավեց լայն ծավալելու իր աշխատանքը, վորը գլխավորապես պրոպագանդիստական բնույթ էր կրում:

Սովորաբար տոն օրերին Բարցխանայում կանաչով ծածկված հրապարակում, բանվորները հավաքվում էին և խաղերով ու պարերով զբոսանքներ էին սարքում: Այդ զբոսանքներից պրոպագանդիստներն ոգավելով

ավելի առաջավոր բանվորների առանձին խմբերի հետ զրույցներ ելին անցկացնում։ Այդ խմբակի գոյությունը հայտնի չեր վոստրիկանություն, բայց հանկարծակի վրա հասնել նրա անմիջական քաղաքական աշխատանքի ժամանակ նրան չեր հաջողվում, հենց մի վորեւե տեղ՝ վոր հայտնվում եր վոստրիկանական պաշտոնյա, անմիջապես զրույց անող խումբն սկսում եր պարել և գնդակ խաղալ։ Բարցխանյան խմբակում «պարերը» ղեկավարում եր պարի դասատու Իվլիյան Շապատալան։ Զվարճություն անմեղությունը համոզում եր վոստրիկանություն վոր այնտեղ «հակաորինական» վոչինչ չկա։ Յերբեմն գնդախաղը վոստրիկանություն ներկայությունամբ այնպես յեռանդուն և «ցուցադրական» եր տարվում, վոր գնդակը ընկնում եր վոստրիկանների գլխին, վորն ավելի ևս համոզում եր վերջիններին հավաքություն անմեղությունը։

1901 թվի վերջին Թիֆլիսից Բաթում յեկավ, այն ժամանակ ղեռ միասնական Սոցիալ—գեմոկրատական կուսակցություն ղեկավարներից մեկը, ընկ. Սոսո Զուլաշվիլին (Յոսիֆ Վիսսարիոնովիչ Սաալին), վորին

հանձնարարված եր Բաթումի կազմակերպություն ընդհատակյա աշխատանքի ղեկավարությունը։

Ընկ. Սոսոն, ինչպես անվանում ելին նրան հեղափոխական բանվորները, Բաթումում բնակվեց Թիֆլիսյան փողոցում Մանթաշևի գործարանի բանվոր Զխալիձեյի բնակարանում։

Ծանոթանալով բարցխանյան խմբակի աշխատանքի հետ, ընկ. Սոսոն, խմբակի անդամ Իվլիան Շապատալայի հետ զրույցելիս, ասաց։

— Զեղանում խիստ դանդաղ ե գնում աշխատանքը, իսկ պետք ե ձգնել, վորպեսզի հեղափոխական շարժումը վորքան կարելի յե արագ ծավալվի։

Սկսելով աշխատանքը, ընկ. Սոսոն, առաջին հերթին գործի քաշեց բարցխանյան խմբակի անդամներին։ Նրանց բանվորների հետ ունեցած կապերից ոգտվելով՝ նա սկսեց նորանոր բանվորական խմբակներ գրավել ղեպ իրան, տալով նրանցից յուրաքանչյուրին առանձին հանձնարարություններ— ագիտացիա մղել իրա ֆաբրիկայի ու գործարանի վստահելի բանվորների մեջ և

ներգրավել նրանց կադմակերպության ընդհատակյա աշխատանքի մեջ:

Մանթաշէի, Ռոտշիլտի, Սիգլիբիլդիսի և այլ գործարանների բանվորների ներկայացուցիչների առաջին նեղ ժողովը կայացավ ընկ. Սոսոյի ղեկավարութեամբ: Այդ ժողովում, ինչպես պատմում ե ընկ. Կոտրիկան, ընկ. Սոսոն ստում եր.

— Ընկերներ, ինձ ձեզ մոտ ուղարկեցին թիֆլիսի բանվորները, վորպեսզի խոսակցեմ ձեզ հետ: Ինչպես ձեզ հայտնի ե, թիֆլիսի բանվորները քնից զարթնեցին և պատրաստվում են պայքարելու իրանց թշնամիների դեմ: Բաթումի բանվորները դեռ հանգիստ քնում են: Յես կոչ եմ անում ձեզ հետեւել թիֆլիսի բանվորների որինակին, ձեռք-ձեռքի տված գնալ նրանց հետ ընդհանուր թշնամիների դեմ:

Յերկրորդ գաղտնի ժողովը տեղի ունեցավ Զխայիձեյի բնակարանում: Այդ արդեն ավելի բազմամարդ ժողովում ընկ. Սոսոն ստում եր.

— Սկսած Մանթաշէից և նրա գործակատարներից և վերջացած վոստիկաններով, բոլորը մեր տերերն (աղեքն) են, և այնպիսի տերեր, վորոնց հարկավոր ե, վոր մենք

շատ աշխատենք ու քիչ ուտենք և ավելի քիչ խոսենք այն մասին, թե ուտել ենք ուզում: Ահա այդ տերերի հետ մենք պետք ե պայքարենք նրա համար, վորպեսզի բանվորները կարողանան ազատ խոսել իրենց կարիքների մասին:

— Հաճախ — պատմում ե այս ժողովի մասնակիցներից մեկը՝ Պ. Դոլլբաձեն — մենք լսում եյինք, թե ինչպես ընկ. Սոսոն հիշում եր Լենինի անունը: Լենինի անունը Սոսոյի բերանում անքակտելի կերպով կապված եր դեպի հեղափոխական գործը նոր հոսսալի բանվորներ ներգրավելու խնդրի հետ. «Մեզ մասսա յե հարկավոր, առում եր Սոսոն — և միայն մասսա: Առանց նրան մեզանում վոչինչ գուրս չի դա»:

Ընկ. Սոսոյի խոսքերն իրականում շուտով ել արդարանում եյին, ֆաբրիկաներում ու գործարաններում խմբակներ եյին կազմակերպվում, բանվորական մասսան ամբողջովին հեղափոխականացվում եր, և նկատելի յեր, վոր մոտենում եյին գործադուլային շարժման ծավալումը խոստացող դեպքերը:

1901 թվին «Բնիտո» գործարանում բանվորների կողմից առաջին անգամ տնտեսական պահանջներ զրկեցին:

Թիֆլիսյան փողոցում ապրած ժամանակ՝ փոստիկանությանը հայտնի դարձավ ընկ. Սոսոյի ընդհատակյա աշխատանքը։ Այդ հանգամանքը ստիպեց նրան ժամանակավորապես Գորոդով փոխադրվել— Սիլիբեստրո Լոմճարիայի տունը։ Այնուամենայնիվ, ինկատի ունենալով, Վոր նրա այստեղ մնալն ել լիովին անվտանգ չէր, մշտական Լոմճարիայի տնից Ալանիայի տունը և յետ փոխադրվելով ընկ. Սոսոն կանգնած էր ավելի ասլահով թաղստոցի տեղ փնտռելու անհրաժեշտության առաջ, վոչ միայն իրա, այլ և ընդհատակյա տպարանի համար ել, վորն այն ժամանակ զեռ նոր էր կազմակերպվում։

Այդպիսի բնակարան գտնելու հարցը Մանթաշևի գործարանի խմբակը հանձնարարեց Իլլարիոն Դարախովելիձեյին և Իվլիյան Շապատավային։


Նոր առաջ յեկած բանվորական թաղամաս— Չառբան զեռ փոստիկոնության կառուցածի տակ չէր գտնվում։ Շատ ընկերներ այդ վերադրում էյին այն հանգամանքին, վոր թաղամասի անանցանելի ճահիճներով ճամբորդությունը փոստիկանական պաշտոն-

յաների համար մի առանձին զրավչաթյուն չուներ։

Այս բանվորական թաղամասում գրունվում էր մի տուն, վորը պատկանում էր յերկու տերերի,— տան կեսը՝ յերեք սենյակից բաղկացած, պատկանում էր Նիկո Նացվալավային, վորի մեջ ապրում էր Իվլիյան Շապատավան իր կնոջ՝ Դեսպինա Շապատավայի հետ։ Մյուս կեսը՝ նոյնպես յերեք սենյակից, պատկանում էր Մաթո Բուսիձեյին և այդ մոմենտին ազատ էր Իլլարիոն Դարախովելիձեն, վորին Շապատավայի հետ միասին հանձնարարված էր ընկ. Սոսոյին համար բնակարան վորոնելը, ինքն ել կարիք ուներ նրան, և Մանթաշևի խմբակում վորոշվեց, վոր այդ բնակարանը կը վերցնեն իրանց անունով Իլլարիոն և Զալբիսման Դարախովելիձեյ յեղբայրները, իսկ ընկ. Սոսոն իր ընդհատակյա տպարանով կտեղավորվի նրանում անլեզար։ Դարախովելիձեյ յեղբայրները զրավեցին յերկու սենյակները, իսկ մի շաբաթ հետո յերբորդ սենյակին անցավ ընկ. Սոսոն։ Շուտով այնտեղ բերվեց ընդհատակյա տպարանը։ Համարյա միաժամանակ ընկ. Սոսոյի հետ Դարախովելիձեյ յեղբայրների սենյակում բնակ-

վեց այն ժամանակվա հեղափոխական  
գործիչներին մեկը—Կոցիա Կանդելակին։  
Ընկ. Սոսոյի՝ Դարախալիձեյի բնա-  
կաբանը անցնելու բողեյից սկսվում է ա-  
վելի պլանավոր, համառ, յեռանդուն և տաք  
աշխատանք, հեղափոխական շարժման գոր-  
ծում ներգրավվում են ավելի և ավելի զի-  
տակից բանվորների շարքեր, քաղաքական  
խմբակների ցանցը լայնանում է, ամրա-  
պնդվում է դասակարգային ինքնագիտակցու-  
թյունը լայն բանվորական մասսաների մեջ։  
Համարյա ամեն յերեկո ընկ. Սոսոն իրա  
սունը ժողովի յեր կանչում ընդհատակյա  
խմբակների ղեկավարներին և ակտիվին։  
Ժողովներում մշակվում և պատրաստվում  
էին հարցեր՝ բանվորների քաղաքական յե-  
լույթների, գործադուլների պատրաստու-  
թյան մասին։ Ժողովներից հետո մինչև ար-  
շալույսը ընկ. Սոսոն իր անբաժան ոգնա-  
կանի—գրաշար Գեորգի Տելիայի հետ ընդ-  
հատակյա տպարանում պրոկլամացիաներ  
էր տպում։

Գործարանի վարչության կողմից բան-  
վորներին վրա գործված ամեն մի ճնշումը,  
իշխանության յուրաքանչյուր յելույթը, վորը  
գործարանատերերի շահերն էր պաշտպա-



Բանվորական թաղամաս—Զարա

նում, գտնում եր իրա արտացոլումը ընկ-  
Սոսոյի մամուլի տակից դուրս յեկած թեր-  
թիկների մեջ: Այդ թերթիկները գրգռում,  
հուզում եյին բանվորներին, զարթեցնում  
եյին նրանց զասակարգային ինքնագի-  
տակցությունը, առաջ եյին բերում տուք  
և բուռն խոսակցություններ, թե սեփական  
իրավունքների մասին պետք է բարձր հայ-  
տարարել, պետք է առաջադրել տնտեսական  
և իրավական պահանջներ և ստիպել գոր-  
ծարանատերերին բավարարել նրանց:

Դեպքերն իրանց յերկար սպասել չափին:  
Հունվարի 31-ին Մանթաշևի գործա-  
րանի բանվորները գործարանի կառավարչի  
արարքների դեմ բողոքի գործադուլ հայտա-  
րարեցին: Վոստիկանությունը 100-ից ավել  
բանվորներ ձերբակալեց:

Բայց բանվորները հաստատուն էյին  
կանգնել, գործադուլը յերկու շաբաթից ա-  
վելի տևեց և վերջացավ բանվորների հաղ-  
թությամբ,—գործարանի կառավարիչն ար-  
ձակվեց, յետ ընդունվեցին բոլոր արձակված  
բանվորները, գործադուլի ժամանակվա աշ-  
խատավարձը վճարվեց, ևն:

Նոյն ժամանակ ել Ռոտշիլդի գործարանից արձակվել եյին 382 հին բանվորներ— «քաղաքական անբարեհուշաներ»: 1902 թվի մարտի 1-ին գործարանի բանվորները գործադուլ հայտարարեցին և ընկ. Սոսոյի դեկավարությամբ գործարանի վարչության ներկայացվելիք մի շարք պահանջներ մշակվեցին, վորոնց թվում՝ արձակված բանվորների հետ ընդունվելը և ութ ժամյա բանվորական որվա սահմանումը:

1902 թվին մարտի 7-ին Բաթումի բանվորական շարժման պատմության մեջ առաջին անգամ Տուրեցկի—բաղարի հրապարակում տեղի ունեցավ բանվորների վեց հազարանոց միտինգը, վորտեղ բացարձակորեն քննվեցին բանվորների պահանջները:

Այդ միտինգը կազակներով ցրվեց: Գործադուլի հետևանքով ձերբակալվեցին մինչև 100 բանվորներ:

Հետևյալ որը՝ մարտի 8-ին, ընկ. Սոսոն աղդու բողոքի ցույց կազմակերպեց պահանջելով՝ վոր ազատ արձակվեն ձերբակալված բանվորները:

Բաթումում մինչև այն ժամանակ չտեսանված՝ կազմակերպված բանվորական մատ-

սան հեղափոխական բացականչություններով դեպի շրջանային բանտը շարժվեց:

Այդ դեպքն այնքան անսպասելի երևալ խանության համար, վոր բանտի ճամբին ցույցը վոչ վոք չկանգնեցրեց, իսկ իրանց պահակամասերում կանգնած վոստիկանները ծածկվեցին դարբասների հետև: Յեւ միայն այն ժամանակ, յերբ ցուցարարները արդեն բոլորովին բանտին մոտեցան, իշխանությունը խեղճի յեկավ և ցույցն ամբողջովին հեծյալ կազակների խիտ ողակով շրջապատվեց:

Մի ինչ վոր կերպով ցուցաբաշներին հայտնի յեղավ, վոր ձերբակալված բանվորները շրջանային բանտում չեն, և վոր նրանք գտնվում են աքսորանոցներում (пересыльные казармы):

Չնայած կոզակների ողակին, բանվորները հանդստորեն բանտից դարձան աքսորանոցների կողմը: Կոզակների ողակը ամենայն զգուշավորությամբ շարժվեց ցուցարարների հետ, առանց շրջապատումը խախտելու: Կոզակների այդպիսի վարմունքն ստիպեց բանվորներին հասկանալ, վոր կոզակներն ուզում են ցույցն ամբողջովին քշել աքսորանոցների բակը և բանվորներից շատերն


սկսեցին հետ մնալ ցուցարարներից: Այդպիսով, յերբ ցույցը աքսորանոցներին մտնեցավ, նրա շարքերում մնացին միայն 400-500 հոգի, վերոնք պահանջեցին ազատ արձակել ձերբակալվածներին և կամ իրանց բոլորին ել ձերբակալել: Կողակները խորամանկութեամբ նրանց բոլորին ներս քշեցին և փակեցին աքսորանոցներում:

Փակվածների թվումն էր և Իվլիյան Շապատաւան, բայց նրան վերպես քաղաքում հայտնի պարի դասատուի և վստահելի անձնավորութեան, իրավունք տվին կալանքից հեռանալ (այդպես պատմեց ինքը Իվլիյան Շապատաւան):

Վազելով տուն Իվլիյանը ընկ. Սոսոին հայտնեց. «Յերբ այդպիսի դժբաղդութիւն պատահեց, նշանակում եմեր տպարանի տեղը անմիջապես վոստիկանութեան հայտնի կրդառնա: Նրան հարկավոր եմ այստեղից հեռացնել, հակառակ դեպքում մենք ամենքս կըկորչենք»:

Ընկ. Սոսոն պատասխանեց:

— Մենք նորից ցույց կը կազմակերպենք, որպեսզի աքսորանոցներն ընկած 450 բանավորներին ազատենք, իսկ տպարանի մասին



Տուրքիկ բազար — Բաթումում

դու շատ մի անհանգստանա, նրա հետքն անմիջապես չեն գտնի:

Մարտի 9-ին առավոտյան յերեք հազարից ավել բանվորներ նորից ցույցի դուրս յեկան: Յեռացող լավայի նման բանվորները խուժեցին գետի աքսորանոցները: Առաջից գնում էին ընկ. Սոոն և ընկ. Գերոնտի կալանգաձեն:

Աքսորանոցներին ընդհուպ մոտեցած բանվորները կապիտան Մնդաձեյի հրամանատարության տակ գտնվող զինվորների սրվիներին հանդիպեցին: Յուրաքանչյուրի մեջ արդեն սկսել էր շփոթությունը, յերբ այդ բոլորին ընկ. Սոսոյի ձայնը հնչեց ամբոխի վրա:

— Զինվորները մեզ վրա չեն կրակի, իսկ նրանց հրամանատարներին մի վախենաք: Խփեցեք ուղղակի նրանց զիններին և մենք ձեռք կրերենք մեր ընկերների ազատությունը:

Ամբոխը մռնչաց և սպառնական կերպով շարժվեց աքսորանոցների կողմը:

— Արձակեցեք մեր ընկերներին կամ մեզ ել նրանց հետ նստացրեք— լսվեց բանվորների աղաղակը:

Իսկ կապիտան Մնատաձեն հրամայեց «կրակ»: Յեւ չնայած նրան, վոր շատ զինվորներ դեպի վեր կըսկեցին, այնուամենայնիվ տասն և չորս բանվորներ սպանվեցին և քառասունից ավելի վիրավորվեցին:

Այս վայրի և արյունալի կոտորածը ամբողջ բանվորական Բաթումին վտառի հանեց. նա ցարական լակեյների այդպիսի արարքներին պատասխանեց ընդհանուր զործադուլով, իսկ արյունոտ գնդակահարութեան զոհերի թաղումը վերածվեց մի փառահեղ միտինգի, վորտեղ դուրս յեկող ընկերները անարգանքով դրոշմեցին թե ցարական կառավարութիւնը և թե զործատերերին—կապիտալիստներին:

Բաթումի բանվորները դասակարգային ինքնագիտակցութիւնը պարզելու գործում խոշոր դեր խաղացին մարտի 9-ի անցքերը: Նրանից ոգտվեց ընկ. Սոսոն, բանվորների մեջ սոցիալիզմի գաղափարի պրոպագանդը խորացնելու և լայնացնելու համար, վորպէսզի ավելի հաստատուն հիմքի վրա դնի բանվորների կազմակերպութեան գործը, վոր-

պեսզի ավելի սերտ միացնի նրանց կուտակյութեան դրոշի շուրջը:

Աքսորանոցներում փակված չորս հարյուր հիսուն բանվորները շուտով Բաթումից արտաքսվեցին: Բայց այդ գուրիացի, մինգրելիացի, լւմերեթիացի և մյուս բաւրականներն ու հողագործիկ գյուղացիները—արյունոտ կոտորածի վիհները—հետները տարան մարտի 9-ի անցքերի մասին Բաթումում հրատարակված պրոկլամացիաները, վոր զբեւ եր ընկ. Սոսոն, և Արեւմտյան Վրաստանի գյուղերում հեղափոխական վարակը տարածեցին, վորն այնտեղ բարենաշող հող գրտավ: Յեւ շուտով նրանից հետո, սկսվեցին բացարձակ դժգոհութիւններ կալվածատերերի և կառավարութեան դեմ:

Հեղափոխական կազմակերպութիւնը մեծ կորուստ կրեց, բայց մարտի 9-ի զոհերը չխախտեցին մարտիկների շարքերը, այլ ընդհակառակը, նրանց ավելի ուժեղ միացրին:

Այդ հիշատակելի ցույցի բուայից վտարականութիւնն ընկ. Սոսոյի հետքի վրա ընկավ:


Դա այսպէս սրատահեց: Յարական զինգականերով վիրավորվածների մեջ գտնվեց, ընկ. Սոսոյի հետ ցույցում գտնվող Գերոն-

տի Կալանդաձեն: Նա ձեռքից եր վիրավոր-  
ված: Չնայած դրության վտանգավորու-  
թյան, ընկ. Սոսոն Գերոնդիին կառք նստե-  
ցրեց և տարավ Չառայի իր բնակարանը:  
Վոստիկանությունը մինչև վերջը, չկարո-  
ղացավ հետևել, թե ընկ. Սոսոն իսկապես  
փորտունը տարավ Գերոնտիին, բայց այնու-  
ամենայնիվ ընկ. Սոսոյի բնակավայրի հեռ-  
քերը մասամբ հայտնված էին:

Ընկ. Սոսոն այդ հասկացավ. Գարախվել-  
իձե յեղբարնեքին և բոլոր այդ տանն ապ-  
րողներին նախազգուշացրեց նա, փորտուն  
վերադառնալիս նրանք մոռնեն զանազան բա-  
կեր, վոնպեսզի հեռքերը չփոթեն:

Յերկու շաբաթ անց, շնորհիվ հեղափո-  
խական կազմակերպության անդամների վոս-  
տիկանության գործունեությունը լրտեսե-  
լուն՝ պարզվեց, փոր ինչպես ընդհատակյա  
տպարանի տեղը՝ նույնպես ել ընկ. Սոսոյի  
բնակարանը վոստիկանության հայտնի են,  
և թե վոստիկանությունը հարմար բոլակի ե  
սպասուժ՝ աշխատանքի ժամանակ՝ տպարա-  
նի գրավման համար:

Իվլիյան Շապատավան առաջարկեց, ա-  
ռանց մի բոլակ կորցնելու, սկսել տպարանի  
վոստիկանությունը մի ավելի աղանով տեղ:



Միայն դոկտորի համար ամսագրի մի օրվա լուսանկարը վաճառ

Բայց ընկ. Սոսոն զրան չհամաձայնվեց:  
— Վոչինչ — ասաց նա — այստեղ չեն գա,  
իսկ եզուց մենք կը հաջողենք տպարանը  
թագցնել: Իսկ յես թերևս, այս տեղից վոչ  
մի տեղ չեմ գնա:

Ամբողջ այդ որն ու զիշերը մինչև  
լույս անընդհատ տպարանում աշխատում  
էր ընկ. Սոսոն: Միայն մյուս որը, յերբ պա-  
տրաստ եյին պետք յեղած քանակությամբ  
թերթիկները, ընկ. Սոսոն ձեռնարկեց տպա-  
րանի փոխադրությանը ուրիշ տվելի ան-  
վտանգ տեղ:

Սոսուկ—Սույի գերեզմանատունը գրա-  
նվում է Գորոգոկից Մահմուդին գյուղը  
տանող ճամբի վրա: Գերեզմանատան պա-  
հապանը Իլլարին Կաշախմաձեն՝ Բաթումի  
Սոցիալ—դեմոկրատ կազմակերպության ան-  
դամ էր: Թե ինչ գեր է խաղացել այդ գե-  
րեզմանատունը ընդհատակյա հեղափոխական  
աշխատանքում, Կաշախմաձեն պատմում է  
հետևյալը:

— Մարտյան արյունոտ զեպքերից քիչ  
առաջ այսինքն՝ 1902 թվի փետրվարին, մի  
անգամ Միլիբիստը Լոմշարիան ինձ հայա-  
նեց, թե նրան ուղարկել է Սոսո Զուղաշ-

վիլին, վորը ուզում ե գաղտնի ժողով գումարել գերեզմանատանը:

Յես հասկացա թե ինձանից ինչ եր պահանջվում և նշանակված ժամանակին պատրաստեցի ամեն ինչ՝ վոր հարկավոր եր: Գիշերը խիստ անձրև եր տեղում, բայց չնայած դրան ժողովը բազմամարդ եր: Զեկուցումներով դուրս յեկան ընկերներ՝ Սոսո Զուլաշվիլին և Կոցիա Կանդելակին: Իսկապես ինչ խոսվեց այդ ժողովում յես այժմ արդեն չեմ հիշում, բայց լավ եմ հիշում, վոր բանվորները առաջ գործատերերին տնտեսական պահանջներ առաջադրելու հարցն եր դրված:

Այդ ժողովից հետո, վորքան հնարավոր եր, շուտով վեր կացա վորպեսզի գետնից բանվորների գցած պապիրոսի մնացորդները հավաքեմ, իսկ մարդկանց հետքերն ել անձրևը լվաց: Այդ որը ինչվոր հանգուցյալի պետք ե բերեյին գերեզմանատուն և յես սկսեցի գերեզմանի պատրաստութիամբ զբաղվել: Աշխատանքի ժամանակ Գորդոկից ինձ մոտ յեկավ ավագ ստրամբիկը: Վախեցած և միևնույն ժամանակ սպառնական ձայնով նա ինձ ասաց.

--Բանից դուրս ե գալիս, վոր այս տեղ յերեկվա գիշերը ժողով կար և դու վոչինչ չգիտես:

Ի՞նչ կարող եյի յես նրան պատասխանել: Յես միայն ասացի, թե յես ցերեկն եմ աշխատում, իսկ գիշերվա մասին վոչինչ չգիտեմ:

Ստրամբիկը խիստ կատաղեց, սկսեց դողդողալ, բայց տեսնելով վոր յես ուշք չեմ դարձնում այդ բոլորին և մեջքս դարձրած նրան շարունակում եմ փորել, չարացած թքեց ու հեռացավ:

Փետրվարի վերջին, համարյա մարտյան անցքերի նախորդակին, նույն գերեզմանատանը ընկ. Սոսոն նորից մի գիշերային ժողով գումարեց, վորտեղ արդեն առաջիկա գործադուլի մանրամասն ծրագիրը մշակվեց:

Սոուկ—Սուլի գերեզմանատունը աշխատանքի առանձնապես դժվար բոլեներին հեղափոխականների ապաստարանն եր հանդիսանում:

Ապրիլին՝ յերեկոյան գերեզմանատան դարպասի առաջ մի կառք կանգնեց: Միջից դուրս յեկավ Կոցիա Կանդելակին և իր մոտ կանչեց Իլլարիոն Կաչախմաձեյին:

— Լսի՛ր Իլլարիոնն: Ահա այս տպարանը, —  
 ընկ՛. Կանդեղակին ցույց տվեց կառքի վրա,  
 — մեր կազմակերպությունը քեզ ե ուղար-  
 կել ե դու նրան պ ետք ե մի լավ թագցնես:

Կառքում գտնվում էյին յերկու մեծ կը-  
 փեր՝ տառերով ե տպագրական մամուլը:  
 Իլլարիոնը իրա կնոջն ողնության կանչեց  
 ե միասին մամուլն ու կփերը տարան ան-  
 միջապես Կաշախմաճեի տան կից լազուտի  
 ամբարը: Կառքը շուտով անհետացավ,  
 տանելով Կոցիա Կանդեղակիին:

Իլլարիոնը համարյա մոտեցել եր լազու-  
 տի ամբարին, յերբ հանկարծ՝ նրա ախանջին  
 դիպան ճամբի կողմից ձիերի ամբակ-  
 ների զովյուններ: Չիջեցնելով մամուլն ու-  
 սիցը՝ Իլլարիոնը կուչ յեկավ թփի յետևն  
 ու տեսավ Գորոտոկի կողմն անցնող ձիավոր  
 ժանդարմներին: Յերբ նրանք անցկացան,  
 Իլլարիոնը վերկացավ ե ուղեց առաջ տանել  
 մամուլը: Բայց այդ բոպեյին նորից լավեց  
 ձիերի ամբակների զովյուն: Իլլարիոնը  
 դարձյալ մամուլն առանց ուսից իջեցնելու,  
 պահվեց թփի յետևը: Դրանք կողակներ էյին,  
 վորոնք արագ արշավելով անցան գերեզմա-  
 նատան կողքից:

Ակներև եր, վոր թե ժանդարմները ե  
 թե կողակները աշխատում էյին Կոցիա Կան-  
 դեղակիին տպարանի հետ միասին բռնել:

Տպարանն իր ժամանակավոր Սոուկ—  
 Սուլի գերեզմանատան թագստոցից փոխա-  
 դրվեց Սիլիբիստրո Լոմջարիայի տունը:  
 Բայց ե այնպես այստեղ ել անհնար յեղավ  
 թեկուզ մի քիչ հանգիստ աշխատել ե թագ-  
 ցնել տպարանը: Վոստիկաններն ամբողջ Գո-  
 րոգիկը հետախուզում էյին: Ծայրահեղ ան-  
 բուժեշտությամբ կազմակերպության առաջ  
 հրաժեշտությամբ կազմակերպության առաջ  
 երբեք եր տպարանի վորքան կարելի ե հե-  
 ոու թագցնելու խնդիրը: Իհարկե այնպ-  
 ես, վոր ընկ. Սոսոն կարողանար անընդհատ  
 աշխատել:

Կովկասի հազարական հանձնաժողովի  
 պորձերի մեջ կա մի փաստաթուղթ, վորի  
 մեջ ասված ե.

„1830 թվին Աբխազիան վերջապահապես  
 հպատակության ե յենթարկված:“

Անվրդով հանգստությամբ ե անամոթա-  
 բար այդպես գրեց իր ռապորտի մեջ շատ  
 տարիներ առաջ ցարական սատրապը:


1830 թվին Աբխազիայի պատմության

մեջ մեծ անցք տեղի ունեցավ, դառնալով մի մեծ դժբաղդություն աշխատավոր արխազ ժողովրդի գլխին:

Այդպես հասարակ և հեշտ կերպով «չի հպատակվում» մի ամբողջ յերկիր,—յերկիր՝ վորը դարեր շարունակ պաշտպանել էր իրա ազատությունը: Յեւ խեղդելով այդ յերկիրը արյան և արցունքի ծովի մեջ՝ իրանց ճամբան ազատաս եր արխազների դիակներով սփռելով եր միայն, վոր „նվաճողները“, կարողացան „վերջնականապես հպատակեցնել“ Աբխազիան:

Յերբ հնազդրական հանձնաժողովի ակտերը կազմում էյին, նվաճողներին թվում էր, վոր Աբխազիան նվաճելու զործն խկապես վերջնականապես և հաստատուն կերպով իրականացված է: Բայց բոլորովին այդպես չէյին մտածում իրանք արխազները:

Սարերն արբեկական հզոր ալիքներով վողովեցին: Մարդիկ՝ վորոնք արբեկներ դարձան, իսկի յել ավազակներ չէյին, ինչպես այդ մասին մտածում էյին շատերը: Դրանք այնպիսի մարդիկ էյին, վորոնք չէյին հանդուրժում ցարական չինովնիկների և բրիտանական միսսիոնարների միջամտությունը իրանց ներքին կյանքի մեջ, վորոնք



Մահմուդիա գյուղը

էյին ուղում հաշտիկ անհատի վրա գործադրված բռնութեան հետ.— բռնի մկրտութեան, սորաժնիկների քմահաճույքներ իհետ այլն, և և այլն։ Անհազանդները սպանում էյին չինովնիկներին, վոչնչացնում էյին զորամասերը, չէյին խղճում և միասիրտարներին և հաղթողների հալածանքներից խուսափելով, բարձրանում էյին սաբերը, դառնում էյին արեւիկներ—որենքից զուրա մարդիկ։

Կովկասի նվաճման և Աբխազիայի հեղափոխական պատմութեան հիշատակելի եջերի մեջ մտան ցարական զինվորների և արխաղ գյուղացիների ընդհարումները, ըստ վորում նրանցից ամենախոշոր և նշանավոր ընդհարումը Լինիի \*) հրապարակում գնդապետ Կոնյարի գլխավորութեամբ բազմաթիվ կողակների մի խմբի ջնջմամբ վերջացաւ, վորոնք յեկել էյին հայտարարելու ցարական «վոյսմած» որենքները, վորոնց՝ առանց այդ ել տանջված ժողովուրդը, հպատակվելու վոչ մի ցանկութեան չունէր։

Ի պատասխան այդ գեպքերին ցարական կոռավարութեան կողմից հետեւեցին այնպի-

\*) Լինի.—Աբխազիայի այն ժամանակվա մայրաքաղաքը։

սի չափանված ճնշումներ, վորոնք արխագներին ստիպեցին թողնել իրանց հայրենիքն ու գաղթել Թյուրքիա:

1877 թվին Արխագիայի բոլոր ծայրերից դեպի ծովափ շարժվեցին արխագների ահագին ամբոխներ իրանց ընտանիքներով, իրանց խղճուկ ունեցվածքով և խնամքով թաշկինակի կամ բաշլիկի ծայրին կապած մի բուռը հայրենական հող: Այս մարդկանց ծովեզերքում արդեն սպասում էին թրքական նավեր՝ հրային կիսալուսիններով առաջաստների վրա:

Յեվ մուհաշիրները \*) ծով դուրս յեկան: Վտարանդիները գնացին ավելի լավ որեր ու լավ հող փնտրելու հանգիստ աշխատանքի համար:

Շատ մուհաշիրներ՝ միջոցներ չունենալով չկարողացան հասնել Թյուրքիայում իրենց խոստացած հողերին և յերկար ծովի վրա թափառելուց հետո դուրս յեկան Բաթում: Արխագներն այստեղ սկզբում ծովափնյա աշխատանքներում՝ որակաճով աշխատեցան, իսկ հետո բնակվեցին աջարացիների հետ Բաթումի շրջակայքում, վոր-

\*) Մուհաշիր.—վտարանդիներ:

տեղ կաղմեցին Մահմուդիա, Ֆերիա, Ֆեզիա, Սալիբահուր, Անկիսա և Կախաբեր գյուղերը:

Մահմուդիա գյուղում Հաշիմ Սըմբա անունով մի արխագ եր ապրում: Նա մուհաշիրներից մեկն էր:

Գյուղացի—հարևաններն ու քաղաքի շատ բանվորներ Հաշիմին ճանաչում էին իբրև աղնիվ և համարձակ մարդու: Հենց նրան ել դիմեց Բաթումի հեղափոխական կաղմակերպությունը աշխատանքի դժվար բոլեյին:

Հաշիմը հեղափոխությունից քիչ եր հասկանում, իսկ յերբ Սիլիբիստրո Լոմշարիան յեկավ և բացատրեց իրերի դրությունը, խնդրեց սպաստարան ընկ. Սոսոյի և ընդհատակյա սպարանի համար, Հաշիմն ստացավ:

Յեվ նույն յերեկոյան ինքը Հաշիմը—իր վորդի Համդու և փեսա Բեջերի հետ, ձիու վրա, տպարանը Լոմշարիայի տնից իրա տունը փոխադրեցին, իսկ հետեյալ որը ընկ. Սոսոն վերաբնակվեց նրա մոտ:

Շատ հաճախ Հաշիմի հարևանները աեսնում էին, թե ինչպես նրա մոտ չաղբայով ծածկված կանայք էին դալիս, բայց

առանց մի դժվարութեան ճանաչում եյին չաղբայրով քողարկված տղամարդկանց: Շատ եյին մտածում գյուղացիք այն բանի մասի, թե ինչու ծպտված տղամարդիկ են գալիս Հաշիմի տունը և ինչու համար Հաշիմը խիստ հաճախացրեց տանից դուրս գալը կանաչով լեքը սակառով:

Չաղբայրով ծածկված մարդիկ զբաշարներ եյին, վորոնք աշխատում եյին ընկ. Սոսոյի հետ ընդհատակյա տպարանում, իսկ Հաշիմի կանաչով լեքը զամբյուղում հետաքրքիր բաներ կային:

Հաշիմը վոչ միայն թագցնում եր իր մոտ ընդհատակյա-հեղափոխական ընկ. Սոսոյին և նրա տպարանը, այլ և բարեխղճորեն զբաղվում եր, տպարանի արտադրանքը հարկ յեղած տեղը փոխադրելով:

Հաշիմը պրոկլամացիաներ ու թերթիկներ եր տարածում գյուղացի ազգաբնակիւթյան մեջ, բանվորների մեջ, իսկ յերբեմն ընկ. Սոսոյի պատվերի համաձայն տանում եր նրանց Փոթի, Ողուրգեթի, պահելով նրանց թարմ կաղամբի մեջ: Փաբրիկներում ու գործարաններում Հաշիմը «միրգ» եր ծախում և յերբ իրան մոտենում եյին այնպիսի գնողներ, վորոնց նա անբարեհույս եր համարում, Հա-

շիմը մոմուում եր.— Սլլահ, ալլահ, իմ ծերունուս գործն ե սեփական մեջքի վրա միրգ տանելը, բայց անիծված աղքատությունը ստիպում ե:

Իսկ վատահեղինորդներին, առանց ավելորդ խոսքերի մրգերը փաթաթում եր պրոկլամացիաներով ու թերթիկներով:

Հաշիմի հարեանները շարունակում եյին տարակուսանքի մեջ մնալ.— Ինչ ե անում այս ծերունին: Չաղբայրով մտնում են, չաղբայրով գուրս գալիս: Հաշիմը համարյա ամեն որ միրգ ու կանաչեղեն ե ծախում: Յեվ որ միրգ ու կանաչեղեն հարեան ծերունուներն եյին վեր քաշում հարեան ծերունիները: Իսկ յերբ իմացան վոր Հաշիմի մոտ ինչ վոր թղթեր են տպվում, նրանք ըստ իրանց վորոշեցին հարցը.— Հաշիմի մոտ տրպվում են վոչ այլ ինչ, յեթե վոչ թղթապվում են վոչ այլ ինչ, յեթե վոչ թղթապրամներ, Իսկ Սոսոն— անպայման կեղծ դրամահատ ե: Իմիջիայլոց, նույն իսկ Հաշիմը, մինչև թերթիկները տարածման գործին լծվելը նույնպես կարծում եր, վոր ընկ. Սոսոն կեղծ թղթադրամ ե տպում: Մի որ յետոն կեղծ թղթադրամ ե տպում: Սոսոն տան եր, Հաշիմի բեկոյան յերբ ընկ. Սոսոն տան եր, Հաշիմի մոտ յեկան մի քանի աջարացի և արխաղ մի մոտ յեկան մի քանի անտեսության մագյուղացիներ: Խոսեցին անտեսության մասին, ուսեղեղենի մասին, թանգության մա-

սին, այն մասին՝ թե փող քիչ ունեն իրենք և յերբ փողի մասին խոսք բացվեց, հանկարծ, ընկ. Սոսոյին ուղղակի հարց տվեցին:

— Լսի՛ր, Սոսո՛, դու լավ մարդ ես, լավ ել գործ ես անում: Յեվ զգու՛մ ենք, վոր մեզ չքավորներին յերևի շուտով քեզանից ոգնություն կը հասնի: Դու ահա ամբողջ գիշերներով աշխատում ես, տպում ես և ինչ վոր արդյունք չի յերևում: Յե՛րբ, վերջապես, քո փողերը շրջանառության մեջ ես դնելու:

Սոսոն յերկար լուռությամբ նայեց դուրացիներին յերեսներին և ասլա ասաց.

— Ահա թե ինչ, ծերունիներ: Յես իսկի ել կեղծ դրամահատ չեմ և վոչ մի կեղծ դրամ չեմ շինում: Ձեր չքավորությանը, ձեր ծանր դրությանն իսկապես վոր ոգնել ուզում եմ, միայն թե վոչ այնպես՝ ինչպես դուք եք կարծում: Յես փող չեմ տպում, այլ պրոկլամացիաներ՝ վորոնց մեջ գրում եմ, թե ինչպես ծանրը ե ձեր ապրուստը, և ինչպես հարկավոր ե վերացնել այդ դժբաղդությունը: Յես ուզում եմ, վոր դուք բանվորների հետ միասին գլորեյիք ցարին իրա բարձր աթոռից, ստեղծեյիք ձեր սեփական իշխանությունը, վորպես-

դի կարողանայիք ինքներդ ձեր կյանքի և աշխատանքի տերը դառնալ:

Ծերունիները լուռ ելին: Նրանք նայեցին միմյանց և ճշտիվ հասկացան այն անձայն հարցերը, վոր տվեցին իրար միմիայն հայացքներով: Իսկ հետո ներկա յեղողներից տարիքով ավագն ասաց:

— Լա՛վ, Սոսո՛: Այն գործն վոր դու անում ես մեզ ոտար չի: Քեզ կեղծ դրամ շինելու մեջ, կարելի ե, չեյինք ել ոգնի, վորովհետև բացի ծայրահեղ փողի կարիքից, բովհետև մենք դրանում ուրիշ վոչինչ չենք հասկամենք դրանում: Իսկ յերբ ասում ես, վոր ցարը նում: Իսկ յերբ ասում ես, վոր ցարը մեզ լավ ապրելու խանգարում ե, այդպեղ մենք շատ բան ենք հասկանում, և այժմ մեզանից յուրաքանչյուրը քեզ լավ ոգնամեզանից յուրաքանչյուրը քեզ լավ թագցնում կան կը լինի: Մինչև այս որ քեզ թագցնում եր միայն Հաշիմը, — դրա համար նրան շնորհակալ ենք, իսկ հիմա մենք բոլորս թագ-ցնելու յենք քեզ քո աշխատանքով միասին, վորքան ույժ և կարողություն կունենանք:

Այս խոսքերով ծերունիները դուրս յեկան: Հաշիմի հետ մենակ մնալով՝ ընկ. Սոսոն ասաց նրան:

— Հաշիմ, կարելի յե քեզ նեղություն եմ տալիս նրա համար, վոր քո տանն այն-

պիսի աշխատանք եմ կատարում, վորը շատ այլ և այլ հետեանքներ առաջ կը լեբի: Կարելի չէ դու չես ցանկանում, Հաշիմ, յեթե այդ պատահեց, ինձ հետ միասին բանտ նըստի: Յես չեմ ցանկանում քեզ վշտացնել, ու յեթե ուզում ես, կը հեռանամ քեզանից:

Հաշիմը վոր յերկար լռությամբ քաշում էր ծխափողը շեշտակի հայացքով նայեց Սոսոյին և ասաց:

— Սոսո, դու յերևի տեսած կը լինես իմ բաղում յերկու կատաղի շներ: Մնացիր ինձ մոտ, այդ յերկու շները վոչ վոքին այստեղ չեն թողնի:

Հաշիմը դարձյալ լռեց մի քիչ, հետո հոգոց հանեց:

— Սոսո, դու լավ մարդ ես: Միայն ավստս վոր մուսուլման չես:

— Յեթե դու մուսուլմանություն ընդունես, յես կնության կտամ քեզ յոթն այնպիսի գեղեցկուհիներ, վորոնց նմանը հազիվ թե դու յերբեիցե տեսած լինես: Ուզո՞ւմ ես մուսուլման լինել:

Ընկ. Սոսոն ժպտալով պատասխանեց, — լավ, — և սեղմեց Հաշիմի ձեռքը:

Այդ «լավ»-ը Հաշիմը մինչև մահը չկարողացավ մոռանալ: Նա չկարողացավ մոռա-

նալ այն, վոր Սոսոն այնպես ուշադրությամբ վերաբերվեց իրա ծերունական հայացքին, և վոր Սոսոն նրա մուսուլմանություն ընդունելու առաջարկը չծաղրեց: Արդեն յոթանասուն տարեկան ծերունի Հաշիմը շատ անգամ պատմել է այս մասին իր վորդի Համդուն և արխաղ Մուստաֆա Ացանբային:

Հետևյալ ուրը, առավոտյան, Հաշիմը կայտառ տրամադրությամբ ընկ. Սոսոյի մոտ յեկավ:

— Վոչինչից մի վախի՛ր՝ — ասաց նա նրան, — քս գործը շատ լավ կը վերջանա:

— Այդ ինչի՞ քեզ այդպես ե թվում, — հարցրեց նրան ընկ. Սոսոն:

— Յերազ տեսա յես, Սոսո: Յեւ վիտես՞ ինչպիսի յերազ: Յերազում տեսնում եյի, թե ինչպես դու ցարական զինվորներից ամբողջ կովկասը ազատեցիր և իբրթե մենք ամենքս սկսեցինք հեշտ, լավ և ազատ ապրել: Իմացիլը վոր այդ լավ է, շատ լավ, Սոսո:

Իր այդ յերազի և նրան ընկ. Սոսոյին պատմելու մասին Հաշիմը սիրում էր հաճախ պատմել բեռնակիր Մուստաֆա Ացանբային:


Մի գիշեր ընկ. Սոսոն նստած եր Դարա-  
խալիճի բնակարանում: Նրանց հետ եր  
նույնպես և Կոցիա Կանդելակին: Սոսակցում  
և Հեյին կասկածում, վոր տան տակին լըր-  
տեսները նստած լսում էին նրանց:\*)

Հանկարծ վոստիկանությունը տուն  
խուժեց և սկսեց խուզարկել: Ամբողջ տունը  
շրջապատված եր վոստիկաներով:

Նրանք բնակարանի բոլոր անկյուն-  
ները յերկար խուզարկեցին և, առան-  
ձին վոչինչ չգտնելով՝ Սոսոյին Կոցիա Կան-  
դելակին և Դարախալիճի յեղբայրներին  
հայտարարեցին ձերբակալված: Ընկ. Սոսոն  
հանդարտ պատուհանի առաջ կանգնած պա-  
պիրոս եր ծխում և ընկերներին հանգստա-  
ցնում, ասելով՝ վոր սրանք բոլորը դատարկ  
բաներ են և առանձին ուշադրություն դարձ-  
նելու արժանի չեն:\*\*)

\*) Անդրկովկասի ցածր տեղերում, խո-  
նավությունից խուսափելու համար, տները  
սովորաբար բարձր քարե սյուների վրա յեն  
կառուցանում:

\*\*) Ձերբակալությունից քիչ առաջ վոս-  
տիկանությունը քաղաքի զաղտնի բնակա-  
րաններից մեկում խուզարկություն եր կա-



Բաթումի բանտը

Այս պատահեց 1902 թվի ապրիլի 5-ին։  
Ստալինը բանդում գտնված ժամանակ Հա-  
շիմը շատ անգամ աշխատում էր տեսնվել  
Դրա հետ, բայց այդ նրան չէին թույլ տա-  
լիս։ Ստալինը հաճախ տեսնում էր իր խը-  
ցիկից Հաշիմին, վորը շարունակ թափառում  
էր բանտի շուրջը։

տարել։ Այն ժամանակ՝ յերբ առաջի սենյակ-  
ներում խուզարկություն էր կատարվում,  
հեռավոր սենյակներում գտնվում էին մի  
քանի հեղափոխական բանվորներ, վորոնց  
մեջ է ընկ. Ստալինը։ Վոստրիկանովից գա-  
լը իմանալով և հասկանալով թե ինչով այդ  
կարող է վերջանալ, մի քանի բանվորներ  
առաջարկեցին բոլոր ապացույցները բարդել  
ընկ. Ստալինի վրա։ Դրա վրա յեւ պնդում  
էր և ինքը՝ Ստալինը։ Բայց ավելի գիտա-  
կից բանվորները բողոքում էին այդպիսի  
քայլի դեմ, ասելով, «ինչ է, մենք դեռյա-  
յով ենք ման գալիս, վոր կուսակցության  
հարկավոր մարդուն չկարողանանք փրկել»։  
Այնպես պատահեց, վոր վոստրիկանովից  
առաջի սենյակների խուզարկությունով սահ-  
մանափակվեց և հեռացավ։ Այս հանգամանքը  
ինքնատիքյան վեճը հարթեց։

Ձեռքած իր բոլոր ջանքերին՝ բանտային լուսամուտի նեղ անցքից Հաշիմը չէր կարողանում տեսնել Ստալինին:

Մի անգամ Սոսոն նրան կանչեց.

— Հաշիմ, Հաշիմ, ինչպես՞ ես:

Միայն այն ժամանակ Հաշիմը նկատեց նրան և ձեռները շարժելով՝ պատասխանեց,

— Լավ եմ, մի՛ վախի:

Յեվ դեռ յերկար կանգնել էր Հաշիմը, նայելով դեպի լուսամուտը՝ կարեկցությամբ գլուխը շարժելով բանտարկյալին:

Ստալինին Բաթումի բանտից փոխադրեցին Քութայիսի բանտը և նստացրին, այսպես կոչված մեծ բանտի առաջին գաղտնախորշում:

Քաղաքական բանտարկյալների մի նոր խմբի գալուց հետո, ընկ. Ստալինը բանտային գործադուլ կազմակերպեց:

Հուլիսին՝ բանտում ախպիսի մեծ չափեր ստացավ, վոր բանտն յեկան դատախազը, նահանգապետը և ուրիշ իշխանավորներ: Ստալինին հարցաքննության կանչեցին, վորտեղ նա ամենակտրուկ և համառ կերպով պաշտպանեց քաղբանտարկյալների բանտային կյանքի բարելավման մասին արած պահանջները: Պահանջները բավարարվեցին:

բանտարկյալներին փոխադրեցին մի մեծ խուց, իրավունք տվեցին իրանց հաշվին տալու: Երբ դեռ, վորպեսզի ցեմենտի հատակի վրա չպառկեն և այլն և այլն:

Ընկ. Ստալինը բանտում խմբակներ կազմակերպեց և սխտեմատիկ աշխատանք էր տանում, բացատրելով կուսակցության ծրագիրը, և թե ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը գյուղացության մեջ: Տասն և վեց ամսյա բանտարկությունից հետո, ընկ. Ստալինին յերեք տարով աքսորեցին Արևելյան Սիբիր, — Իրկուտսկի նահանգի Բալասանի գավառի Նովայա Ուդա գյուղը: Ընկ. Ստալինին մնացած բանտարկյալների կողմից ճանապարհ գցելը մի նոր ցույցի վերածվեց նրանց կողմից:

Բաթումի ընդհատակյա աշխատանքում հանդարտություն տիրեց: Ընկ. Սոսոյից հետո Անդրեկովկասից աքսորվեցին հեղափոխական շարժման ուրիշ հայտնի ղեկավարներ ևս:

Բայց այդ հանդարտությունը յերկար չտևեց:

Աքսորավայրը հասնելուց մի ամիս հետո, 1904 թվի հունվարին, Ստալինը փախավ

այնտեղից և վերադարձավ Անդրկովկաս ան-  
լեզալ աշխատանքի:

Կուսակցութեան 11 համագումարում տեղի  
ունեցած պառակտումից հետո, Ստալինը  
առանց տատանվելու անցավ Լենինի կողմը,  
— բոլշևիկների կողմը: Յեւ ահա ընկ. Սո-  
սոն նորից հայանվեց Բաթումում, զինվորի  
հագուստով Կոբա անվան տակ: Համարյա  
միաժամանակ նրա հետ Բաթում յեկավ հայտ-  
նի մինչև իկ Պետրե — Նոյ Բամիշվիլին: Չնա-  
յած՝ վոր դեռ հեղափոխականորեն չհասունա-  
ցած բանվորների մեծ մասը անցել էր մեհ-  
շևիկ Պետրեյի (Նոյի) կողմը, բայց լավա-  
զույն, պայքարի մեջ կոփված բանվորներն  
անցան Ստալինի կողմը:

Սոսոն շրջում էր ֆաբրիկաներն ու գոր-  
ծարանները, ստուգելով բանվոր պատակար-  
գի շարքերը, զգայունութեամբ դիտում էր՝  
թե ով վոր կողմն է թեքվում: Մի ճնշված  
Մանթաշի գործարանը գալով ընկ. Սոսոն  
մենշևիկորեն տրամադրված բանվոր Պավլե  
Դոլբրաձեյին մոտեցավ և հարցրեց:

— Պավլե, միթե դու ել սկսեցիր մենշևի-  
կորեն դատել:

Ընկ. Սոսոն առաջուց արդեն քիչ ու միչ

լսել էր Պավլեյի տրամադրութեանների մա-  
սին:

— Իմ ընկերների մեծամասնութեանն այն-  
տեղ է, դրա համար յես ել նրանց հետ եմ:

Ընկ. Ստալինը հանդիմանական հայաց-  
քով նայեց Դոլբրաձեյին և խստութեամբ  
ստաց:

— Այդ մեծամասնութեանը, ասենք թե,  
մեծամասնութեան ել չէ,— յես այդ ասում  
եմ հեղափոխականների վորակի իմաստով:  
Իսկ ընդհանրապես՝ կգա ժամանակ և կիմա-  
նաս, թե ով է իրավացի և ով վրի:

Ընկ. Սոսոն արագ շուռ յեկավ և  
զուրա յեկավ ցեխից:

Դեռ մինչև նրա գալը՝ ընկ. Իլարիոն Դա-  
րախվելիձեն լսելով կուսակցութեան պա-  
ռակտման մասին, մի անգամ նախկին ընդ-  
հատակյա տպարանի գրաշար ընկ. Գեոր-  
գիին հարցրեց թե ինչ է մտածում նա  
կուսակցութեան մեջ պատահածի մասին:

Ընկ. Գեորգին պատասխանեց:

Այժմ դեռ վրիժն չեմ կարող քեզ ասել,  
վորովհետև յես Սոսոյին գալուն եմ սպասում,  
իտի, յերբ նա կգա հետևելու յես նրան, թե  
ինչ կասի նա ինձ, վորովհետև յես հավա-  
տացած եմ, վոր Սոսոն չի սխալվի:

Նրանց հետ ընկ. Ստալինը իրա հեղափոխական գործունեությունը շարունակում է Անդրկովկասում, աշխատում է Թիֆլիսում, Դուրախում, Բաքում, Ճիաթուրիում Ոգուրգետի գավառում և ուրիշ տեղերում: Ընկ. Ստալինը մենշևիկների գլխավոր ընդդիմախոսն էր, տանելով կատաղի պայքար մենշևիզմի դեմ բոլշևիզմի գաղափարի տիրապետության համար:

Վրաստանում և ամբողջ Անդրկովկասում բոլշևիկները ընկ. Ստալինի անմիջական ղեկավարության տակ ձևակերպվեցին և աճեցին, նա դեռ այն ժամանակ Անդրկովկասում բոլշևիզմի հայանի թեորետիկը, վոդեֆորոնն ու կազմակերպիչն էր:

Ծագեց 1914 թվի համաշխարհային իմպերիստական սպանդանոցը:

Ծերունի Հաշիմը լավ համարեց պատերազմի ժամանակ Աբխազիա տեղափոխվել: Ընտանիքով միասին թողնելով իր ոջախը՝ Հաշիմը չմոռացավ հողում թաղել տպարանի բոլոր իրերը, և ծածկելով նրանց խոնափ հողով, ասաց իրա վորդուն:

—Վոչինչ, Համդի, թող սրանք այստեղ մնան, յերեկ դեռ պետք կգան:

Հաշիմի տանը զինվորներ բնակվեցին: Մի անգամ նկատելով թարմ հողաթումբը պարտիզում, նրանք վորոշեցին, վոր այդ տեղ մի բան է թագցրված, գուցե և իրանց համար պետքական: Զինվորները վերցրին թիերը, փորեցին հանեցին հողից տպարանի մասերը և տեսնելով՝ վոր իրանց համար առանձին հետաքրքիր բաներ չեն ներկայացնում, ցրվի սովին նրանց, պարտիզում:

Վորոտաց հեղափոխությունը, Հաշիմը վերադարձավ իր տունը: Զննելով խնամոտ հայացքով իր հին պարտեզը, Հաշիմը տեսավ ցրվի սված այն, ինչ վոր մի ժամանակ խոնամքով թագցրել էր: Հաշիմը յերկար խոտերի մեջ պրպտեց և հավաքեց տպարանի առանձին մասնիկները: Յերբ բոլորը գտավ և հավաքեց մի տեղ Հաշիմը կանչեց վորդուն:

—Տես՝ Համդի: Դու յերեկ հիշում ես, թե սա ինչ է: Այս այն է, վոր ոգնեց հեղափոխություն անելու,

Սրանց մի լավ թագցրու Համդի, և թող դրանք պահվեն այնպես, վոր հայելով այս յերկաթի կտորներին՝ յես կարողանամ հիշել թանկագին Սոսոյին:



Պատասխանատու խմբագիր Ա. Քալանթարյան:  
Արտադրության պատասխանատու Ի.Յ.Գորգուն  
Թարգմանիչ և սրբագրիչ Պ. Սրապյան

Տրված և տպագրության 5XII1934թ. թույլատրված  
և տպագրության 25 III35 թերթի ֆորմատը 44X56,  
զլավիկտ № 508, կուսհրատ № 19, տիրած 3000,  
նշանների քանակություն պատվեր № 6574

Տպարան Արպետհրատ, Սուխում

ՀՀ Ազգային գրադարան



NL0183264

35  
Call 39

916 75 100.

5

478

1  
2

СТАЛИН и ХАШИМ